ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 ապրիլի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

59
(2725)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԱԿՑԻԱՆ՝ ԱԺ-ՈՒՄ

Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը երեկ քաղաքական ակցիա իրականացրեց խորհրդարանում: Նախ իր ելույթի ընթացքում, որի ժամանակ դահլիճում նստած էր նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Թագուհի Թովմասյանը ներկայացրեց այս իշխանությունների բացթողումներն ու թերությունները՝ նրանց մեղադրելով դավաճանության մեջ: «Արցախահայերին միայնակ թողնելն ամենամեծ անբարոյականությունն է եւ անխղճությունը, Ձեր հրամանով են զորքերը հետ քաշվել: Դուք ձախողել եք ամեն ինչ եւ ամենուր»: Թովմասյանը նաեւ, Նիկոլ Փաշինյանի աչքերի մեջ նայելով, մի քանի օրինակներով հանրայնացրեց, թե ինչպես է ստել Նիկոլ Փաշինյանը վերջին 5 տարիների ընթավքում. «Ձեր ստելու լիմիտը սպառել եք»: Արդեն Թագուհի Թովմասյանի ակցիայի ժամանակ, երբ նա չէր իջնում ամբիոնից, Նիկոլ Փաշինյանին մեծաքանակ թիկնապահների ուղեկցությամբ մեկուսացրին դահլիճից:

Երեկ Ազգային ժողովում թեեւ անհարկի ակտիվություն էր ցուցաբերում ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, սակայն իրականում նրան ղեկավարում էր փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը: Նա էր հուշում ու հրահանգներ տալիս ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին: ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի ելույթի ժամանակ, երբ հայտարարեց, որ ամբիոնից չի իջնելու, Ռուբինյանը, ձեռքով հրելով Ալեն Սիմոնյանին, հրահանգեց անջատել խոսափողը: Սիմոնյանը բարձրաձայն ասաց՝ անջատե՛ք խոսափողը, ապա նույն ձեռքի հրահանգով ընդմիջում հայտարարեց Ալեն Սիմոնյանը: Երբ, ոգեւորված ազատագրված ամբիոնի փաստից, նկատողություն ստացած պատգամավորների անուններն էր փորձում հրապարակել, դարձյալ նրան ցուցակ փոխանցեց Ռուբինյանը: Ստացվում է՝ Ալեն Սիմոնյանը Ռուբեն Ռուբինյանի հրահանգներով է շարժվում եւ փաստացի դրածո է խորհրդարանում, իսկ իրական ԱԺ նախագահը Ռուբեն Ռուբինյանն է, որ նստած տեղից երեկ ողջ ընթացքում չբարձրացավ, նաեւ՝ այն ժամանակ, երբ թեժ իրավիճակում Նիկոլ Փաշինյանին մեկուսացրին:



ՀՀ քննչական կոմիտեում Ջալալ Հարությունյանի դեմ հարուցված քրեական գործով 6-ամսյա ժամկետը լրանում է, ուստի նախաքննական մարմինը քրեական դատավարության օրենսգրքով այլընտրանք չունի եւ մինչեւ մայիսի 20-ը պետք է քրեական գործով նախաքննության ավարտ հայտարարի եւ գործը դատարան ուղարկի: Նշենք, որ 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախի պաշտպանության բանակը ղեկավարած Ջալալ Հարությունյանին երկու դրվագով առաջադրված մեղադրանքներից մեկը Ցորի զորամասի 20 հրետանավորների զոհվելու հանգամանքներին է վերաբերում: 44-օրյա պատերազմի օրերին ծանր վիրավորում ստացած ու այդ պատճառով պաշտոնից ազատված 47-ամյա Ջալալ Հարությունյանին առաջադրված մեղադրանքի մյուս դրվագով էլ նշվում է, թե հենց նրա գործողությունների հետեւանքով են հոկտեմբերի 7-ին՝ հակահարձակման ժամանակ, հայկական ստորաբաժանումները մարդկային մեծաքանակ ուժի ու զինտեխնիկայի կորուստ կրել, պահեստային ստորաբաժանումները դարձել են ոչ մարտունակ, զբաղեցրած կրակային դիրքերն անցել են հակառակորդի հսկողության տակ:

Արցախի պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանի գործը Հակակոռուպցիոն դատարան ուղարկելուց հետո իրավապահ մարմինները նրա կնոջը թույլ են տվել տեսակցել ամուսնուն: Մինչ օրս որեւէ հարազատ չէր կարողացել նրան տեսնել: Հիշեցնենք՝ օրեր առաջ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել էր Քննչական կոմիտեի ներկայացրած միջնորդությունը եւ 2 ամսով երկարեցրել Արզումանյանի կալանքը: Արցախի ՊԲ նախկին հրամանատար, Արցախի նախագահի խորհրդական Միքայել Արզումանյանին մեղադրանք է ներկայացվել 2020 թվականի արցախյան պատերազմի ընթացքում ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող «Արեգա» բարձունքը եւ հարակից մարտական դիրքերն ազատագրած անձնակազմին «նահանջ» հրաման տալու համար: Արզումանյանը կալանավորվել էր նախորդ տարվա սեպտեմբերի 1-ին եւ մինչ օրս մնում է կալանքի տակ:

ՇՏԱՊՈՒՄ Է

ԱԼԻԵՎԸ ԹՈՂ ՄԵԾ-ՄԵԾ ՉԽՈՍԻ

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախի շուրջ տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ զրուցել է «Արաբո» ջոկատի հրամանատար Մանվել Եղիազարյանի հետ:



-Պարոն Եղիազարյան, Ադրբեջանի նախագահը հերթական անգամ սպառնալիքներ ու վիրավորանքներ է հնչեցրել հայ ժողովրդի հասցեին: Մեկ ասում է՝ «Ղարաբաղում ապրող հայերը կամ պետք է ընդունեն Ադրբեջանի քաղաքացիություն, կամ էլ պետք է իրենց համար այլ բնակության վայր գտնեն», մեկ էլ սպառնում է, թե «Հայաստանի ժողովուրդը թող լավ մտածի, մի օր կարող է աչքերը բացեն, Ադրբեջանի դրոշն իրենց գլխավերեւում տեսնեն»: Ո՞րն է Ալիեւի նման լկտի վարքագծի պատճառը:

-Դա նշանակում է, որ Ալիեւը շտապում է, որովհետեւ ինքը տեսնում է, որ այսօրվա իշխանությունները թուլանում են, իսկ ժողովուրդն ակտիվանում է, կարող է հանկարծ ուրիշ մեկը իշխանության գա գործող իշխանությունների փոխարեն ու ահուսարսափի մեջ պահի Ադրբեջանին: Ադրբեջանը այդ պոտենցիալը չունի, որ մեզ սպառնա: Միջազգային հանրությունը պարտադրում էր, որ 5 շրջանները տայինք Ադրբեջանին. դա համաշխարհային քաղաքականությունն էր պահանջում, դրա համար էլ պատերազմից հետո լռեցին, քանի որ հեռահար նպատակներ ունեին այդ 5 շրջանների հետ, բայց մնացած մասով աշխարհը Ալիեւին չի օգնելու, Ալիեւն էլ է դա հասկանում, դրա համար էլ շտապում է: Հայաստանում, ինչպես ասում են, տվողներն են եկել իշխանության, Ալիեւն էլ փորձում է անընդհատ մի բան պոկել, քանի որ տեսնում է՝ներկայիս իշխանությունները թուլանում են, կարող է Փաշինյանին ուժեղ մարդով փոխարինեն, ու այդ ժամանակ ոչ մի շանս չի ունենալու Արցախի մասին խոսելու:

-Պարոն Եղիազարյան, բայց Ալիեւն արդեն բացեիբաց խոսում է նաեւ Երեւանի մասին, չի թաքցնում իր նկրտումները Երեւանի մասով:

-Ճիշտ է անում. եթե դուք ձեր տունը չեք ուզում պաշտպանել, ուզում եք հանձնել, նա էլ ուզում է վերցնել, դրա համար էլ նման հայտարարություններ է անում: Փաշինյանն անընդհատ գոռգոռում է, ուզում է համոզել ժողովրդին՝եկեք Արցախը տանք, որ պրծնենք, թե չէ Երեւանն էլ են գրավելու: Ալիեւին ձեռք չի տալիս, որ Նիկոլը գնա, ու նորմալ իշխանություն գա Հայաստանում. որ նորմալ իշխանություն եղավ, Ալիեւը ոչ միայն շանս չի ունենա Երեւանի կամ Արցախի մասին խոսելու: Ես խորհուրդ կտամ Ալիեւին՝ թող մեծ-մեծ չխոսի ինքը, քանի իր դիմաց նապաստակներ են կանգնած, իրեն առյուծ է զգում, բայց օրը կգա, ու իսկական հայերով կհավաքվենք կողք կողքի, տեսեմ՝ոնց է էլ հոխորտում:

-Նիկոլ Փաշինյանն անընդհատ շեշտում է, որ Հայաստանը ճանաչվում է իր 29.800 քկմ տարածքով: Ի՞նչպես կմեկնաբանեք սա, այսինքն՝ հեշտությամբ հրաժարվո՞ւմ են Արցախից:

-Այդ մարդը բազմիցս նշել է, որ ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Թվաբանություն հո գիտենք. երբ ասում է 29.800 ք/կմ, Արցախը չի մտնում դրա մեջ, նշանակում է, Արցախն էլ է Ադրբեջանի մաս ճանաչում: Մենք նոյեմբերի 9-ին պատերազմը դադարեցրել ենք միայն նրա համար, որ Պուտինն ասել է՝ով որտեղ կանգնած է, դա էլ իր սահմանն է, այդ ժամանակ եւ Քարվաճառն էր մերը, եւ Լաչինը: Երբ իշխանությունը փոխենք, կպահանջեք հետ այդ ամենը. մենք իրավունք ունենք պահանջելու, որ նոյեմբերի 9-ի դրությամբ եղած տարածքները մեզ վերադարձվեն: Երբ սա գնա, մենք այդ հարցը կբարձրացնենք:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՊԱՀԱՆՋ

ԲԱՔՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է

Պաշտոնական Բաքուն կրկին մեղադրանքներ է հնչեցրել. այս անգամ նա պահանջում է Երեւանից միանշանակ ընդունել Ղարաբաղը որպես Ադրբեջանի տարածք: Այս մասին ասվում է Ադրբեջանի արտգործնախարարության հայտարարությունում:

Սա եղավ այն բանից հետո, երբ երեկ ՀՀ ԱԳՆ-ն արձագանքել էր Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին, երբ նա պնդել էր, թե այժմ ժամանակն է, որ Հայաստանի ղեկավարն ինքն իր հայտարարությունը խմբագրի եւ հայտարարի «Ղարաբաղն Ադրբեջան է»:

Հայաստանի արտգործնախարարությունը, արձագանքելով Իլհամ Ալիեւի այս պահանջին եւ նույն հարցազրույցում հնչեցրած սպառնալիքներին, պնդել է, որ Ադրբեջանի նախագահն իր հայտարարությամբ ընդունում է Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ ծրագրավորված ագրեսիա իրականացնելու փաստը, իսկ Բաքուն երեկ ուշ երեկոյան է անդրադարձել հայկական կողմին, մեղադրանքներ է հնչեցրել Հայաստանի իշխանությունների հասցեին:

Ադրբեջանի արտգործնախարարությունը նաեւ նշում է, որ արդեն 43 օր է՝ սպասում է իր առաջարկների վերաբերյալ հայկական կողմի մեկնաբանություններին:

Ադրբեջանը միաժամանակ հավաստիացնում է, թե, ի տարբերություն իր հարեւանի, պատրաստ է խաղաղություն կնքել, բայց մինչ այդ պահանջում է, որ հայկական կողմը հրաժարվի Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություններից եւ նաեւ ճանաչի, որ Ղարաբաղը հանդիսանում է Ադրբեջանի տարածք:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԿՍԵԼ Է ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը երեկվանից, թուղթը վերցրած, պտտվում է խմբակցությունում եւ ստորագրություններ է հավաքում, որպեսզի Թագուհի Թովմասյանին պաշտոնանկ անեն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնից:

«Ամենայն հավանականությամբ, առաջիկայում այդ հարցը խմբակցությունում կդառնա քննարկման առարկա», - Ազգային ժողովում երեկ այս մասին հայտարարեց Աղազարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նրա ստորագրահավաքին խմբակցությունից մի քանիսն արդեն միացել են, սակայն մեծ թվով պատգամավորներ դեռ մտավախություն ունեն, որ իրավական հիմքեր չկան պաշտոնանկության գործընթաց սկսելու համար: Բացատրությունները ցանկությունների եւ զգացմունքների դաշտից են, բայց քաղաքական որոշումը դեռ չկա, ուստի ՔՊ խմբակցությունը դեռ հավաքական «կարծիք» գործադիրից չի ստացել, որ հայտնի: Սպասում են:

ԽԱԽՏՎԵԼ ԵՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Երեկ խորհրդարանում ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հրամանի հետեւանքով խախտվել են ԱԺ նստավայրի տարածքում եւ շենքում գործող անվտանգության կանոնները:

Ինչպես հայտնի է, երեկ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի քաղաքական ակցիան տապալելու համար նիստերի դահլիճ հրավիրեց անվտանգության աշխատակիցներին, եւ նրանք հրելով ու բռնությամբ դուրս հանեցին դահլիճից ընդդիմադիր պատգամավորներից մի քանիսին:

Այդ հրամանն ակնհայտ ապօրինի էր, քանի որ ԱԺ շենքում անվտանգության կանոնների 7,8 կետում հստակ նշված է.

«Պահպանության ծառայությունն իր նախաձեռնությամբ կամ Ազգային ժողովի աշխատակազմի իրավասու պաշտոնատար անձի միջնորդությամբ համաչափ միջոցներ է ձեռնարկում կարգազանց անձին (բացառությամբ պատգամավորի) կարգի հրավիրելու համար՝ ընդհուպ պահպանվող տարածքից հեռացում, որի մասին անմիջապես զեկուցում է՝ ըստ վերադասության»:

Նկատեցի՞ք՝ անվտանգության կանոններում հստակ նշված է, որ պատգամավորի նկատմամբ անվտանգության աշխատակիցներն իրավունք չունեն որեւէ քայլ անել:

Երեկ, սակայն, նրանք կարգազանցությամբ են զբաղվել, օրենքով արգելված գործողություններ են կատարել:

Տեղի էր ունենում քաղաքական ակցիա, որին իրավունք չունեին միջամտելու:

ԳՐՔԵՐԻ ՕՏԱՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն առաջարկում է հայերեն տպագրված գրքերի բոլոր տեսակների օտարումն ազատել ԱԱՀ-ից: Հիմնավորման մեջ նշվում է, թե այդ հանգամանքը կբերի գրքի գնի նվազեցմանը եւ հրատարակվող գրքերի քանակի ավելացմանը:

Բանն այն է, որ ներկայումս, ՀՀ կառավարության որոշմամբ, սահմանված են ԱԱՀ-ից ազատման արտոնությունների շրջանակները, որոնք վերաբերում են դպրոցական գրերի եւ նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական եւ դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական եւ ուսումնական հրատարակությունների օտարմանը:

Նաեւ նշվում է, որ վերջին տարիներին աշխարհի բազմաթիվ երկրներ նվազեցրել են տնտեսվարողների՝ գրքերի հրատարակչության եւ իրացման հետ կապված հարկային բեռը՝ ընդհուպ մինչեւ առանձին հարկատեսակների վերացում: Համապատասխան նախագիծն այժմ դրված է հանրային քննարկման:

ՀԱՆԵԼ ԵՆ ԱՃՈՒՐԴԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ Դիլիջան քաղաքում գտնվող 2977,8 քառ. մետր մակերեսով շենք-շինությունները, ինչպես նաեւ դրանց զբաղեցրած, օգտագործման եւ սպասարկման համար հատկացված 0.94 հեկտար մակերեսով հողամասը կօտարվեն:

Այն այժմ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված է «Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը: Կառավարության որոշման նախագծում նշվում է, որ գույքն իրենից ներկայացնում է վարչական շենք, որը ներկայումս չի շահագործվում եւ ունի հիմանորոգման կարիք:

Դա է պատճառը, որ առաջարկվում է այդ շենքը մրցույթով օտարել:

Մրցույթով օտարման ենթակա գույքի վաճառքի նվազագույն գին է սահմանվել գնահատված արժեքի 100 տոկոսի չափը՝ 343 մլն 800 հազար դրամը՝ ներառյալ հատկացված հողամասի տվյալ պահին գործող շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը՝ 64 մլն 242 հազար դրամը:

Գնորդը պարտավոր է վճարել նաեւ գույքի արժեքի որոշման դիմաց գանձվող գումարը՝ 1 մլն 792 դրամը:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Կարեն Ամիրյանի որոշմամբ, բավարարվել է դատախազի ներկայացրած վերաքննիչ բողոքը, եւ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի նախկին ղեկավար Սեյրան Մեջլումյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

ՉԷՐ ԻՋՆՈՒՄ

ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԱԿՑԻԱՆ՝ ԱԺ-ՈՒՄ

Ազգային ժողովում երեկ մթնոլորտը կրկին լարվել էր: «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանը կառավարության ծրագրի կատարողականի մասին ելույթի վերջում հայտարարեց, որ քաղաքական ակցիա է իրականացնում եւ, ի նշան բողոքի, չի հեռանալու ԱԺ ամբիոնից:

«Եվ թույլ չեմ տալու երկրի թիվ մեկ ամբիոնից կրկին ստեր հնչեցնեք, կասկածի տակ դնեք Արցախի հայկական լինելը կամ հայ ժողովրդի պատմությունն ընդհանրապես», - ասաց նա՝ հրավիրելով իր հետ համակարծիք գործընկերներին միանալ:

«Բավական է, սթափվե՛ք ու հասկացե՛ք ձեր պատասխանատվության չափաբաժինը», - շեշտեց նա:

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը շտապեց հրահանգել անջատել հեռարձակումն ու դահլիճ հրավիրեց անվտանգության աշխատակիցներին, որոնք հեռացրին ընդդիմադիրներին:

«Հիմա տեղի է ունենում կոնկրետ ապօրինություն, որովհետեւ Ազգային ժողովի նախագահը բիրտ ուժի կիրառման հրահանգով մեզ դուրս է հանել Ազգային ժողովի դահլիճից, եւ մեզ հիմա արգելում են մտնել մեր աշխատավայր: Սա բացահայտ ապօրինություն է, մարդու իրավունքների, պատգամավորի գործունեության իրավունքի ուղիղ ոտնահարում: Սա նշանակում է՝ ուղղակի մենք գործ ունենք տարրական անպատժելիության հետ», - արդեն դահլիճից դուրս հայտարարեց պատգամավոր Թովմասյանը լրագրողների հետ զրույցում:

«Սոթքում կրակում են, դուք այստեղ խոսում եք ձեռքբերումներից: Եկել, ի՞նչ բյուջեի կատարողական եք քննարկում: Դուք բարոյականությունից եք խոսում, բայց ի՞նչ բարոյականության դասեր եք տալիս»,- հայտարարեց Թովմասյանը:

Ամբիոնի մոտ Թովմասյանի ակցիային միացան «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը եւ նույն խմբակցության պատգամավոր Աննա Մկրտչյանը:

Երբ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը պահանջեց անջատել բարձրախոսը եւ հրավիրեց ԱԺ նիստերի դահլիճ անվտանգության աշխատակիցներին, քաշքշուկ սկսվեց պատգամավորների եւ անվտանգության աշխատակիցների միջեւ:

Ընդդիմադիր պատգամավորներից մեկը դահլիճից բղավեց, թե՝ կարող է թքեք, ինչին ի պատասխան՝ Ալեն Սիմոնյանն արձագանքեց. «Որ պետք լինի, կթքեմ»:

Ընդդիմադիր պատգամավորներն ամբիոնում մոտեցել էին Թագուհի Թովմասյանին, որպեսզի թույլ չտան անվտանգության աշխատակիցներին դուրս հանել նրան նիստերի դահլիճից:

«Ով որ մոտենա այստեղ, Արեգնազով, Աննայով հանե՛ք դուրս: Հանկարծ մտքներով չանցնի, որ այստեղ կարող եք ինչ-որ բան թելադրել»,- ասաց Սիմոնյանը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

3-ՕՐՅԱ ԳՈՐԾՈՒՂՈՒՄ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Հայկ Կոնջորյանը, Արուսյակ Մանավազյանը, Կարեն Համբարձումյանը, Ռուստամ Բաքոյանը, Հայկ Ցիրունյանը եւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լիլիթ Գալստյանը մայիսի 1-4-ը կգործուղվեն Նիկոսիա (Կիպրոսի Հանրապետություն):

Թե գործուղումն ի՞նչ օրակարգով է, կամ ի՞նչ հանդիպումներ են լինելու, ԱԺ կայքում հրապարակված համապատասխան որոշման մեջ որեւէ տեղեկություն չկա:

Պատգամավորների գործուղման հետ կապված օրապահիկի եւ ճանապարհածախսի վճարումը կկատարվի ՀՀ պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին, իսկ գիշերավարձի վճարումը կատարում է հրավիրող կողմը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ապրիլի 20-ին պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ընդունել է Բրազիլիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆաբիո Վազ Պիտալուգային: Այս մասին հաղորդում են Պաշտպանության նախարարությունից:

Հանդիպման ընթացքում քննարկվել են պաշտպանության բնագավառում երկկողմ համագործակցության հնարավորություններին առնչվող հարցեր:

Դեսպանի խնդրանքով պաշտպանության նախարարը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության բարեփոխումների ընթացքը:

Զրուցակիցները քննարկել են նաեւ տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր:

ԻՆՉՈ՞Ւ ՀԵՏԱՁԳՎԵՑ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի նախաձեռնած երեկվա՝ ապրիլի 20-ի քննարկումը 44-օրյա պատերազմում զոհված կամ անհետ կորած զինվորների ծնողների հետ կրկին հետաձգվում է:

Ինչպես հայտնի է, ապրիլի 18-ին հրավիրված ԱԺ արտահերթ նիստին մասնակցում էր Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, եւ անվտանգության աշխատակիցները արգելում են որեւէ քաղաքացու մուտքն Ազգային ժողովի շենք, ուստի ծնողների մուտքն ԱԺ անհնար է դարձել:

Քննարկման անցկացման օրվա եւ ժամի մասին լրացուցիչ տեղեկություն կտրվի, երբ ԱԺ արտահերթ նիստերն ավարտվեն:

ՓՈԽԱՆՑՎԵԼ Է

ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԵԼ Է 2 ՄԼՐԴ ԴՐԱՄԻ ՎՆԱՍ

Երեւան քաղաքի դատախազությունում, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակում, ուսումնասիրվել են Դավթաշեն թաղամասի Եղվարդի խճուղի 22 եւ Անաստաս Միկոյան փողոցի 64 հասցեներում գտնվող երկու հողամասերի կադաստրային գործերը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանք եղել են մեկ միասնական միավոր: 2003 թվականի հունվարի 17-ին Դավթաշեն 4-րդ թաղամասի դիմաց գտնվող 6.06 հա մակերեսով այգին վարձակալության տրամադրելու նպատակով հանվել է աճուրդի, որում հաղթող է ճանաչվել Ե.Գ.-ն: Այնուհետեւ, Երեւանի քաղաքապետի 2003 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ, նույն հողամասը 25 տարի ժամկետով տրամադրվել է վարձակալության՝ տարեկան 20 հազար 90 դրամ վարձավճարով, ժամանցի եւ հանգստի գոտու կազմակերպման նպատակով:

Միաժամանակ, հողամասի վարձակալության գնման նախապատվության իրավունքի համար աճուրդի մեկնարկային գինը սահմանվել է 60 հազար 600 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որը հայտատուն վճարել է քաղաքապետարանի հաշվեհամարին:

Մրցույթի արդյունքում հաղթողի համար սահմանվել են պարտականություններ, այդ թվում՝ տվյալ տարածքում 300 միլիոն դրամի ներդրում կատարելը, շինարարությունը մինչ 2006 թվականն ավարտելը, երեք ամիսների համար միանվագ վարձավճար մուծելը: Գործարքի կնքումից մեկ ամիս անց, սակայն, առանց վերոնշյալ պարտականությունների եւ կնքված վարձակալության պայմանագրի պայմանների պարտադիր կատարման, այգու տարածքը 2003 թվականի մարտի 28-ին օտարվել է Ե.Գ.-ին: Ապրիլի 4-ին քաղաքապետարանի եւ Ե.Գ.-ի միջեւ կնքվել է այգու ուղղակի վաճառքի մասին պայմանագիր, որով 6.06 հա մակերեսով հողամասը 20 մլն 883 հազար 972 դրամով օտարվել է Ե.Գ.-ին. օգտագործման նպատակը սահմանվել է որպես ժամանցի եւ հանգստյան գոտու կազմակերպման շինարարություն:

2004 թվականի մարտի 2-ին Ե.Գ.-ի լիազորված անձի եւ «Սանի Լենդ համատեղ ձեռնարկություն» ՍՊ ընկերության (35 տոկոս բաժնեմասը պատկանել է նույն Ե.Գ.-ին) միջեւ կնքվել է հողամասի վարձակալության պայմանագիր, որով տվյալ ընկերությանն է տրամադրվել տարածքը զվարճանքի եւ հանգստյան գոտի ստեղծելու նպատակով, իսկ 2006 թվականի մայիսի 2-ին կողմերի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիրը լուծելու մասին համաձայնություն: Այնուհետեւ, Ե.Գ.-ի դիմումի հիման վրա, կատարվել է գույքի բաժանում 3.5023 հա եւ 2.5577 հա չափերով հողատարածքների, որից հետո՝ 2006 թվականի մայիսի 15-ին, Ե.Գ.-ն 3.0523 հա հողամասն անհատույց 20 տարի ժամկետով օգտագործման է տրամադրել «Սանի Լենդ համատեղ ձեռնարկություն» ՍՊ ընկերությանը (կնքվել է անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր):

2007 թվականի դեկտեմբերի 4-ին Ե.Գ.-ի եւ «Մոսկովյան ինվեստիցիոն շինարարական ընկերություն ք.Երեւան» ՍՊ ընկերության միջեւ կնքվել է անշարժ գույքի տարաժամկետ վճարումով առուվաճառքի պայմանագիր, որի համաձայն՝Ե.Գ.-ն իրեն պատկանող հողատարածքից 2.5577 հա հողամասն իր կողմից գնված արժեքից անհամեմատ բարձր գնով՝ 697 մլն 727 հազար 272 դրամով, վաճառել է նշված ընկերությանը, իսկ 2007 թվականի դեկտեմբերի 6-ին պայմանագրում կատարվել է համապատասխան կետի փոփոխություն, եւ սահմանվել է, որ անշարժ գույքի վաճառքի գինը կողմերի համաձայնությամբ կազմել է 767 մլն 500 հազար դրամ:

2019 թվականի մարտի 20-ին Ե.Գ.-ի (որպես վաճառող) եւ «Ն եւ Ս Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության (որպես գնորդ) միջեւ կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի եւ գրավի պայմանագիր, որի համաձայն՝ գնորդին է հանձնվել Եղվարդի խճուղի 22 հասցեում գտնվող հողամասը՝ 1.5023 հա մակերեսով, եւ Դավթաշենի Երեւան-Եղվարդ խճուղի 22 հողամասը՝ 2 հա մակերեսով: Դրանցից առաջինի գինը կազմել է 887 մլն 722 հազար դրամ, իսկ երկրորդինը՝ 1 մլրդ 295 մլն 424 հազար դրամ:

Երեւան քաղաքի դատախազությունում իրականացված ստուգումների ընթացքում ուսումնասիրվել է օտարման պահին գործած քաղաքաշինական համապատասխան փաստաթուղթը: Պարզվել է, որ վերոնշյալ հողատարածքները հանդիսացել են հասարակական նշանակության կանաչ գոտիներ (ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ «Արգելվում է քաղաքացիներին եւ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք՝(...) բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են (հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գետափեր, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր եւ ընդհանուր օգտագործման այլ տարածքներ) (...)»):

Նշված արարքների հետեւանքով, նախնական հաշվարկով, պետությանը պատճառվել է 2 մլրդ 929 մլն 762 հազար 28 դրամ գումարի գույքային վնաս:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել է Երեւանի քաղաքապետարանի աշխատակիցների կողմից առերեւույթ չարաշահման դեպք՝ 2023 թվականի ապրիլի 3-ին դատախազի կողմից առերեւույթ հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

2023 թվականի ապրիլի 14-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որը պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս):

ԴԱՏԱՐԱՆ

ՎԻՃԱՐԿՎԵԼՈՒ Է ՄԻՊ-Ի ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Դատական կարգով վիճարկվելու է Մարդու իրավունքների պաշտպան ընտրելու Ազգային ժողովի որոշումը. այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է հասարակական-քաղաքական գործիչ, ՍԴ աշխատակազմի նախկին ղեկավար Էդգար Ղազարյանը:

«Իմ կողմից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով անվավեր ճանաչել եւ վերացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 11.04.2023 թվականի «Անահիտ Մանասյանին Մարդու իրավունքների պաշտպան ընտրելու մասին» թիվ ԱԺՈ-69-Ա որոշումը:

Որոշումն անվավեր ճանաչելու համար մատնանշված են հինգ խումբ գործոններ.

-որոշումը կայացվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ,

- ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից առաջադրվել եւ ընտրվել է ՀՀ Սահմանադրությամբ եւ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի պահանջներին չհամապատասխանող թեկնածու,

-Անահիտ Մանասյանը Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում առաջադրման եւ ընտրվելու ընթացքում զբաղեցրել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնը՝ խախտելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, հանրաքվեներին դատախազը կարող է մասնակցել միայն որպես ընտրող (քվեարկող), տվյալ դեպքում նա պետական մարմնի ընտրությանը մասնակցել է որպես թեկնածու,

-ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 4-ի նիստը, որի ժամանակ քննարկվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում Ազգային ժողովին թեկնածու առաջադրելու մասին հարցը, ըստ էության տապալվել է՝ նիստի մի հատվածի ընթացքում քվորումի բացակայության, իսկ մյուս հատվածում ընդհիմության կողմից առաջադրված թեկնածու նկատմամբ ֆիզիկական բռնությունների սպառնալիքների, անձնական վիրավորանքների, հոգեբանական ճնշումների, ելույթի, հարցուպատասխանի հնարավորությունից զրկելու եւ այլ դրսեւորումներով՝ խախտելով Ազգային ժողովի կանոնակարգը եւ հանձնաժողովի նիստի հատուկ ընթացակարգը,

-Անահիտ Մանասյանը Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում փաստացի ընտրվել է ոչ թե Ազգային ժողովի, այլ իրեն առաջադրող խմբակցության կողմից՝ ըստ էության խախտելով քվեարկության գաղտնիությունը, քանի որ ընտրությանը մասնակցել են միայն «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 69 պատգամավորներ, որոնք բոլորն էլ կողմ են քվեարկել նրա թեկնածությանը, այսինքն՝ փաստացի տեղի է ունեցել ոչ թե գաղտնի, այլ անվանական քվեարկություն»,- գրել է նա:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱԼԱՆԱՎԱՅՐՈՒՄ

Ապրիլի 17-ին արտառոց դեպք է տեղի ունեցել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում:

Թիվ 46 խցում պահվող դատապարտյալ, 34-ամյա Խաչատուր Պետրոսյանը ժամը 02:00-ի սահմանում այդ օրվա հերթապահ խմբի պատասխանատու Վարանցով Ղ.-ին խնդրել է շտապ ընդունելու յուն: Նրա խնդրանքը կատարվել է: Ընդունելու նպատակով բացվել է խցի դուռը, ինչից հետո Խ. Պետրոսյանը իր մոտ եղած սուր կտրող-ծակող մետաղյա առարկայով հարձակվել է Վարացնով Ղ.-ի, նույն հիմնարկի հերթափոխի 1-ին խմբի մասնագետներ Տիգրան Պ.-ի եւ Արտակ Մ.-ի վրա ու պատճառել մարմնական վնասվածքներ: Դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ: Բանտի աշխատակիցներին տրվել է դատաբժշկի ուղեգիր:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 19-ից 20-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 58 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԴ

ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՆ

Ոստիկանության Տավուշի բաժնում տեղեկություններ են ստացվել, որ Բերդ համայնքի սահմանամերձ Չինարի գյուղի 19-ամյա բնակիչ տղամարդը 2023 թվականի մարտի սկզբին անառակաբարո գործողություններ է կատարել իր անչափահաս՝ 13 տարեկան քրոջ նկատմամբ: Պարզվել է նաեւ, որ 19-ամյա երիտասարդը իր 20-ամյա քրոջ կամքին հակառակ սեքսուալ բնույթի գործողություններ է կատարել նրա հանդեպ: Ոստիկանները կասկածյալ երիտասարդին տեղափոխել են ոստիկանության Տավուշի բաժին, որտեղից ներկայացվել է Հայաստանի քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Բերդի քննչական բաժին: Բերդի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 198 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի եւ 198 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում 19-ամյա երիտասարդը ձերբակալվել է: Տեղեկացա, որ Չինարի գյուղում բնակվող այդ ընտանիքը ունեցել է 6 երեխա, որից մեկը մահացել է: Համագյուղացիներն ասացին, որ ընտանիքի 5 երեխաներն էլ մտավոր հետամնաց են, կարդալ-գրել չեն կարողանում, ոչ սահուն են խոսում, որ նրանց ասածները դժվարությամբ են ընկալվում: Նրանցով զբաղվել են Բերդ համայնքի սոցիալական աշխատողները, սակայն դրական արդյունքներ չեն եղել: Այդ ընտանիքի հայրը 52 տարեկան առաջին խմբի հաշմանդամ ազատամարտիկ է, որը 1990-ական թվականների մարտական գործողությունների ժամանակ ծանր վիրավորվել է, նրա մարմնի մի մասը պլաստամասից է: Տղամարդը տարիներ առաջ Կոտայքի մարզից կին է բերել Չինարի: Համագյուղացիներն այդ ընտանիքում խելքը գլխին են համարում միայն ընտանիքի հորը: Չինարիից ստացված տեղեկություններով՝ 19-ամա տղայի կողմից իր քույրերի նկատմամբ անառակաբարո, սեքսուալ գործողություններ կատարելու վերաբերյալ ոստիկանություն է դիմել երեխաների մայրը:

ՍԱՀՄԱՆԻ ԵԶՐԻՆ

Անցյալ տարի հանդիսավորությամբ նշվեց Խորանաշատ վանական համալիրի 800-ամյակը: Բերդ համայնքի Չինարի բնակավայրի վարչական ղեկավար Սամվել Սաղոյանը հայտնեց, որ Խորանաշատը գտնվում է հայ-ադրբեջանական փաստացի սահմանից ընդամենը 150 մետր հեռավորությամբ, Խորանաշատ այցելելը վտանգավոր է, զինվորականները շրջանցիկ ճանապարհով են ուղեկցում վանք այցելողներին: Ս. Սաղոյանը հայտնեց, որ Խորանաշատի վիճակը վատթար է, այն վերանորոգման խիստ կարիք ունի: Բնակավայրի վարչական ղեկավարի խոսքերով՝ 1946 թվականին չինարեցիները սեփական ուժերով մասնակի վերանորոգում են կատարել Խորանաշատում, սակայն այժմ նորոգման խիստ կարիք կա:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆՀԻՄՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՈՒՐԳԻ ՁՈՀԵՐ

ՀՀ ֆինչական կոմիտեում ֆինվող թվով 6 ֆեական վարույթի նյութերի ուսումնասիրությամբ վեր են հանվել լայն տարածում գտած՝ ֆինանսական բուրգի սխեմայով Հայաստանում կատարվող հանցագործությունների ընդհանուր մեխանիզմները:



Դրանց էությունն այն է, որ ֆինանսական բուրգերի համակարգողները, գերշահույթ ստանալու նպատակով, ֆինանսական կազմակերպությունում ներդրումներ կատարելու պատրվակով քաղաքացիներին դրդում են գույքային (ֆինանսական) միջոցներ ներգրավել՝ նյութական օգուտը պայմանավորելով բացառապես նրանց կողմից նոր ներդրողների ներգրավման դեպքում ստացված ֆինանսական միջոցներով: Մինչդեռ քաղաքացիներից ստացած ֆինանսական միջոցներն իրական ձեռնարկատիրական գործունեության մեջ չեն օգտագործվում:

Նման կազմակերպությունները իրենց իրական հանցածին բնույթը քողարկելու եւ հնարավոր քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակով գույքային միջոցների ներգրավմանը, ներդրմանը հաղորդում են որոշակի ապրանքային տեսք: Սակայն անձինք հնարավորություն չեն ստանում այդ ապրանքի նկատմամբ իրական վերահսկողություն ունենալ:

Մասնավորապես, Միացյալ Թագավորությունում Vodanet British LTD անվանումով հաշվառված՝ ՀՀ-ում VODA անվանումով հայտնի ֆինանսական բուրգի համակարգողները Իրանի Իսլամական Հանրապետությունում եւ Հայաստանի Հանրապետությունում տեւական ժամանակ քրեաիրավական պատասխանատվությունից եւ որոշ ներդրողների նկատմամբ ստանձնած պարտավորություններից խուսափելու նպատակով վերակազմակերպվել եւ Կանադայում հաշվառել են Onyxum LLC կազմակերպությունը: Վերջինս Հայաստանում հայտնի է համանուն անվանումով: Այս կազմակերպությունը, իբր, իրականացնում է հանգստյան փաթեթների միջնորդավորված վաճառք այն պայմաններում, երբ նշված կազմակերպության գրեթե յուրաքանչյուր ներդրող ինքը եւ համարվում է հանգստյան փաթեթի գնորդ, շահառու՝ առանց այդ ծառայության նկատմամբ լիարժեք սեփականության իրավունքի իրացման հնարավորության: Նմանատիպ սխեմայով գործող ֆինանսական բուրգի օրինակ է նաեւ ԱՄՆ-ում հաշվառված եւ Հայաստանում գործունեություն ծավալած inձruises LLC անվանումով կազմակերպությունը: Վերջինս ներդրողներին խոստանում է որոշակի ներդրումների դիմաց շուկայականից մատչելի քրուիզային ճանապարհորդություն եւ հանգիստ, միաժամանակ կազմակերպությունից խոշոր շահույթ ստանալու հնարավորությունը կապում է ֆինանսական միջոցներ ներդրած անձանց կողմից նոր ներդրողներ ներգրավելու հետ:

Ֆինանսական բուրգերի դասական սխեմաներով են աշխատում նաեւ ՀՀ-ում հիմնադրված «Վան Քարտ» ՍՊԸ-ն եւ ՌԴ-ում հիմնադրված Про 100 Геум կազմակերպությունները:

«Վան Քարտ» ՍՊԸ համակարգողները onecard բջջային հավելվածի գործածմամբ ստեղծել են ոչ իրավաչափ ձեւով գործող ֆինանսական համակարգ: Դրանում ներգրավել են մի քանի տասնյակ հազար անձի, որոնց, որոշակի միջոցների ներդրման դիմաց, խոստացել են ներդրված եւ հավելվածում արտացոլված դրական մնացորդին համարժեք օրական մեկ տոկոսի չափով՝ որեւէ ֆինանսական կապիտալով չհիմնավորված շահույթ:

Про 100 Геум կազմակերպությունը գործել է համացանցային տիրույթում՝ համանուն կայքով, որում ներդրում կատարելու համար յուրաքանչյուր անձից գանձվել է նվազագույնը 12,5 դոլար: Դրանից 2,5 դոլարը նախատեսված է եղել գրանցման, իսկ 10 ԱՄՆ դոլարը համարվել է «բիզնեսի համար կատարվող ներդրում»: Այնուհետեւ ներդրողի դիմաց խնդիր է դրվել գտնել եւ նմանատիպ պայմաններով համակարգում գրանցել եւս երկու անձի, որոնցից յուրաքանչյուրի ներդրումներից անձը ստացել է 5% եկամուտ, իսկ այդ անձանց կողմից եւս երկու ներդրողի ներգրավելու պայմաններում առաջին անձը ստացել է նրանցից յուրաքանչյուրի ներդրած գումարի 95%-ը, որոնք միասին կազմել են 38 ԱՄՆ դոլար: Երկրորդ փուլում, երբ հրավիրվածների ընդհանուր թիվը հասել է 7-ի, շղթան փակվել է: Արդյունքում անձը ստացել է 39 դոլար, որը սակայն, չի կարող ամբողջությամբ կանխիկացնել, քանի որ 10 ԱՄՆ դոլարը նախատեսվել է նոր շղթա սկսելու համար: Եղել են նաեւ ավելի թանկարժեք փաթեթներ, որոնցից ամենամեծ ներդրումն արժեցել է 2560 ԱՄՆ դոլար:

Մեկ այլ վարույթով 2019թ. մի խումբ անձինք Հայաստանում փաստացի հիմնադրել են Ourteamclub (Աուրթիմքլաբ) ՍՊԸ-ն, որը ներկայացել է որպես հայկական ստարտափ ընկերություն: Այդ անձինք առանձնապես խոշոր չափերով գումար վաստակելու նպատակով իրենց իսկ կողմից կազմակերպված դասընթացների ընթացքում համոզելու, վստահություն ձեռք բերելու եւ այլ մեթոդներով շահագրգռել են նոր ներգրավվող անձանց ձեռք բերել կազմակերպության կողմից նախատեսված 125 ԱՄՆ դոլարից մինչեւ 101.250 ԱՄՆ դոլար ֆիքսված արժեքներ ունեցող հնարածին նախագծերը՝ խոստանալով 22-29 ամիսների ընթացքում տրամադրել ներդրված գումարի կրկնապատիկի չափով եկամուտ՝ նրանցից յուրաքանչյուրի շահույթը պայմանավորելով բացառապես նոր ներդրողների ներգրավումից ստացված գումարներով: Ընդ որում՝ հավելյալ գումարներ աշխատելու համար ֆինանսական բուրգի համակարգողները կիրառել են բինարային բոնուս կոչվող ծրագիրը, որի պարագայում յուրաքանչյուր ներգրավված անձի կողմից իր հերթին երկու անձ ներգրավելու դեպքում, վերջիններիս կողմից գնված նախագծի արժեքներից կախված՝ հնարավորություն է ընձեռնվել ստանալ 2-9 տոկոսի չափով գումար: Իսկ նոր ներդրողների կողմից եւս երկուական անձանց ներգրավելու դեպքում խոստացել են վճարել լրացուցիչ բոնուսներ: Նշված հանցավոր սխեմայում իրական ֆինանսական կազմակերպության տպավորություն ձեւավորելու եւ հնարավոր ներդրողի մոտ վճռականություն առաջացնելու նպատակով շրջանառել են իրական հարաբերություններում տնտեսական արժեք չունեցող՝ իրենց կողմից ստեղծված եւ կրիպտոարժույթի որակներով ներկայացված թվացյալ արժույթ: Այդկերպ տալով դյուրին եղանակով մեծ գումարներ վաստակելու խոստումներ՝ կազմակերպության շարքերում նրանք ներգրավել են բազմաթիվ անձանց, իրականացրել գույքի ներգրավմանն ուղղված գործունեություն, որի հետեւանքով ֆինանսական բուրգում ներգրավվել է առանձնապես խոշոր չափերի՝ 250 մլն ՀՀ դրամ գումար: Վերը նշված ֆինանսական սխեմաներով հանցավոր կազմակերպությունների կողմից ներգրավվել են նախնական տվյալներով մի քանի տասնյակ միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք գույքային միջոցներ: Այդ հիմքով մեղադրանքներ են առաջադրվել ընդհանուր առմամբ 43 անձանց, այդ թվում՝ ԻԻՀ, Կանադայի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների:

ԼՈՒՐԵՐ

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերում ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության նոր ձեւավորվող ստորաբաժանումների համար սեդան տեսակի տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու նպատակով 2023 թ. ապրիլի 18-ին հայտարարվել է գնման ընթացակարգ՝ էլեկտրոնային աճուրդի միջոցով, որի հայտերի ընդունման վերջնաժամկետը 2023 թ. մայիսի 4-ն է, իսկ հակադարձ աճուրդը տեղի կունենա 2023 թ. մայիսի 5-ին: Տրանսպորտային միջոցների տեխնիկական բնութագիրը նախապես ուղարկվել է ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին, եւ ստացված առաջարկությունների արդյունքում տեխնիկական բնութագրում նշված հիմնական չափորոշիչները, նախորդի համեմատ, ընդլայնվել են:

ԱՐԳԵԼԵԼ Է ՆԵՐԿՐՈՒՄԸ

Լեհաստանը Եվրամիությանն առաջարկել է արգելել Ուկրաինայից ոչ միայն ցորենի, այլեւ սննդամթերքների ներկրումը՝ ներառյալ մրգերը, ձուն, թռչնամիսը, շաքարը եւ մեղրը: Բրյուսելում ռադիոկայանի թղթակցի տեղեկացմամբ՝ իրավիճակը բարդանում է նրանով, որ հարեւան երկրները տարաձայնություններ ունեն՝ ներմուծման համար արգելված մթերքների հետ կապված: Բուլղարիան, օրինակ, կցանկանար ավելացնել ալյուրը եւ կարագը, իսկ Հունգարիան՝ թռչնամիսը, մեղրն ու ալյուրը: Չորեքշաբթի Լեհական ռադիոն տեղեկացրել էր, որ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը արեւելաեվրոպական հինգ երկրների (Լեհաստան, Բուլղարիա, Ռումինիա, Սլովակիա, Հունգարիա) ղեկավարներին ուղարկած նամակում պատրաստակամություն է հայտնել ուկրաինական հացահատիկի, եգիպտացորենի, արեւածաղկի եւ սրոհունդի՝ռապսի սահմանափակումներ մտցնել ԵՄ-ի մակարդակով:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2023 թ. մայիսի 11-ին՝ ժամը 12:00-ին, պարտապան Լիլիթ Բաղդասարյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով Լիլիթ Բաղդասարյանին պատկանող գույքի աճուրդը՝ 1 ԼՈՏ 4 ենթալոտով, բաց դասական եղանակով:

Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ 1, ենթալոտ 1. Ոսկյա խաչ 1 հատ, իրի զանգվածը 2.8 գրամ է, հարգը՝ 580:

Մեկնարկային գինը կազմում է 37,100 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1, ենթալոտ 2. Ոսկյա շղթա 4 հատ, իրերի զանգվածը 143.8 գրամ է, հարգը՝580:

Մեկնարկային գինը կազմում է 1,905,350 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1, ենթալոտ 3. Ոսկյա թեւնոց 1 հատ, իրի զանգվածը 5.0 գրամ է, հարգը՝580:

Մեկնարկային գինը կազմում է 66,250 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1, ենթալոտ 4. Ոսկյա մատանի 3 հատ, իրի զանգվածը 21.4 գրամ է, հարգը՝580:

Մեկնարկային գինը կազմում է 283,550 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1 ընդհանուր մեկնարկային գինը կազմում է 2,292,250 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը,
- աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր:

Մասնակցության վճարը եւ նախավճարը կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար՝1% եւ 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Լիլիթ Բաղդասարյանի սնանկության հաշվին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Նոր Արեշ» մասնաճյուղ՝ 1150021420610630 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան /ք. Երեւան. Օտյան 53/2/ :

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2023-24 ԹԹ. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցը (Հայաստանի դիվանագիտական դպրոց) հայտարարում է «Միջազգային հարաբերություններ եւ դիվանագիտություն» 2023-24 թթ. դասընթացի մասնակցության մրցույթ:

Ընդունելության մրցույթին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող, դիմումի հայտը հանձնելու պահին 35 տարին չլրացած ՀՀ քաղաքացիները, որոնք ունեն ՀՀ կառավարության 2014 թ. հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների եւ որակավորումների ցանկով» սահմանված որակավորում եւ չեն տառապում ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 15-ի N 98-Ն որոշմամբ հաստատված՝ «Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը, ինչպես նաեւ ուսումնական հաստատություններում մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկում» նշված որեւէ հիվանդությունով:

Դասավանդման լեզուներն են հայերենը եւ անգլերենը: Նշված լեզուների, ինչպես նաեւ դիմորդի ընտրությամբ եւս մեկ օտար լեզվի գերազանց իմացությունը պարտադիր է: Լեզուների իմացությունը ստուգվելու է քննության թե՛ գրավոր, թե՛ բանավոր փուլերում: Իր տիրապետած երկրորդ օտար լեզվի մասին դիմորդը նախօրոք նշում է կատարում ընդունելության մրցույթին մասնակցելու դիմում-հայտում: Դասերը վարում են ՀՀ ԱԳՆ բարձրաստիճան դիվանագետներ եւ արտերկրի առաջատար բուհերից հրավիրված բարձրակարգ դասախոսներ:

Դասընթացը կմեկնարկի 2023 թ. սեպտեմբերին եւ կավարտվի 2024թ. հուլիսին: Ուսումն անվճար է:

Պահանջվող փաստաթղթերի ցանկ.

1. դիմում (լրացվում եւ հանձնվում է առցանց, տպագրված եւ ստորագրված տարբերակը դիմորդը հանձնում է անձամբ),
2. ինքնակենսագրություն (լրացվում է առցանց դիմումի մեջ, տպագրված եւ ստորագրված տարբերակը դիմորդը հանձնում է անձամբ),
3. դասընթացներին մասնակցելու նպատակի համառոտ նկարագիր (լրացվում է առցանց դիմումի մեջ, տպագրված եւ ստորագրված տարբերակը դիմորդը հանձնում է անձամբ),
4. երկու լուսանկար (3.5x4.5սմ, անձնագրի ձեւաչափին եւ դիմորդի տարիքին համապատասխան՝ ի լրումն դիմումին կցված նույն ձեւաչափի էլեկտրոնային լուսանկարի),
5. անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
6. բարձրագույն ուսումնական հաստատության դիպլոմի պատճենը,
7. զինվորական գրքույկի կամ կցագրման վկայականի պատճենը (արական սեռի դիմորդների համար),
8. դիմումում ներկայացված տեղեկությունները հաստատող այլ փաստաթղթեր:

Պահանջվող փաստաթղթերի ցանկին կարելի է ծանոթանալ եւ դիմումի ձեւը բեռնել Դիվանագիտական դպրոցի կայքի «Ընդունելություն» բաժնից :

Դիմում-հայտի պարտադիր դաշտում չներառված տեղեկությունների մասին նշումներն արվում են «Այլ տեղեկություններ» բաժնում: Այս տեղեկությունները հաստատող փաստաթղթերը ներկայացվում են միայն Դիվանագիտական դպրոցի պահանջով:

Էլեկտրոնային եղանակով դիմումները գրանցած եւ պահանջվող փաստաթղթերը ներկայացրած դիմորդները 2023թ. հունիսի 15-ին կհրավիրվեն գրավոր քննության առաջին փուլին, որը կազմված է ՀՀ Սահմանադրության, հայոց պատմության, համաշխարհային պատմության եւ աշխարհագրության մասին, ընդհանուր զարգացվածության եւ տրամաբանության հարցերի վերաբերյալ բազմակի պատասխաններից ընտրությամբ թեստից եւ ներառում է նաեւ մասնագիտական տեքստերի թարգմանություն հայերենից անգլերեն եւ հայերենից դիմորդի նշած երկրորդ օտար լեզու: Գրավոր քննության առաջին փուլը հաջողությամբ անցած դիմորդները կհրավիրվեն գրավոր քննության երկրորդ փուլին (միջազգային հարաբերությունների/արտաքին քաղաքականության վերաբերյալ թեմայով շարադրություն): Երկրորդ փուլը հաջողությամբ անցած դիմորդները կհրավիրվեն հարցազրույցի: Լավագույն դիմորդները հնարավորություն կստանան մասնակցելու դասընթացին:

Դիմորդներից ակնկալվում է աշխարհում ընթացող՝միջազգային հարաբերությունների ոլորտին վերաբերող հիմնական իրադարձությունների մասին տեղեկացվածություն: Ուսումնական ծրագիրը կազմված է տեսական եւ գործնական առարկաներից: Դասավանդվող առարկաներից ունկնդիրները կհանձնեն ընթացիկ քննություններ, որոնց արդյունքները, հաճախումների, այցերի մասնակցության եւ պրակտիկայի գնահատականների հետ, հանրագումարային գնահատականի մաս կկազմեն: Դասընթացը հաջողությամբ ավարտած ունկնդիրները կստանան ավարտական վկայական: Լավագույն շրջանավարտները, ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան, կարող են աշխատանքի ընդունվել ՀՀ ԱԳ նախարարությունում:

Դասընթացն անցկացվելու է Դիվանագիտական դպրոցում (Վազգեն Սարգսյան 3, Կառավարության 2-րդ շենք): Դասերն անցկացվելու են ամեն աշխատանքային օր՝օրվա երկրորդ կեսին:

Ընդունելության մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ս.թ. ապրիլի 17-ից մինչեւ հունիսի 7-ը ներառյալ

1) լրացնել էլեկտրոնային դիմում-հայտը,
2) ապրիլի 17-ից մինչեւ հունիսի 9-ը ներառյալ անձամբ հանձնել փաստաթղթերը ՀՀ դիվանագիտական դպրոցում՝ Վազգեն Սարգսյան 3, Կառավարության 2-րդ շենք, Երեւան 0010 հասցեով, ամեն աշխատանքային օր՝ժ. 10.30-17.30:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2023թ. մայիսի 19-ին՝ ժամը 12:30-ին, Գառնիկ Կիրակոսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով Գառնիկ Կիրակոսյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Շերամի փողոց, 23 շենք, 3 բնակարան հասցեի անշարժ գույքը. 77.3 քմ մակերեսով անշարժ գույքի՝ սեփականության իրավունքի գրանցման թիվ 17102019-01-0101 վկայական:

Մեկնարկային գինը սահմանվում է 25,560,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով (բայց ոչ ավել 200,000 ՀՀ դրամից) մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Գառնիկ Կիրակոսյանի սնանկության հաշվին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Նոր Արեշ» մասնաճյուղ՝ 1150021127007018 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք.Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՉԻՆ ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանի մի խումբ դպրոցականներ ապրիլի 20-ին հնարավորություն ունեցան առցանց հանդիպել «Շենչ-ժու-15» անձնակազմի ներկայացուցիչներին եւ տվյալ պահին տիեզերանավում գտնվող չին տիեզերագնացներին՝ ծանոթանալով նրանց առօրյա կյանքին: Հանդիպմանը մասնակցեցին երեք դպրոցի 8-10-րդ դասարանի աշակերտներ:

ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպան Ֆան Յոնգը նշեց՝ Հայաստանում առաջին անգամ են նման միջոցառում կազմակերպում: Նրա համոզմամբ՝ սա շատ լավ առիթ է հայ երիտասարդներին տիեզերական ոլորտում Չինաստանի ունեցած ձեռքբերումներին ծանոթացնելու եւ գիտելիքներ փոխանցելու համար:

«Քանի որ Հայաստանը եւ Չինաստանը շատ լավ գործընկերներ եւ ընկերներ են, մենք փորձում ենք Հայաստանի հետ կիսվել մեր երկրի զարգացման փորձով: Կարծում եմ՝ սա շատ լավ առիթ է հայ երիտասարդների մոտ տիեզերագնացության ոլորտում հետաքրքրություն առաջացնելու համար, ինչը ապագայում կզարգացնի երկիրը: Չինաստանի զարգացման ճանապարհին տիեզերագիտության ոլորտի զարգացումը մեծ դեր է խաղացել»,-ընդգծեց դեսպանը:

Նմանօրինակ հանդիպումները կնպաստեն հայ-չինական հարաբերությունների զարգացմանը՝ համոզված է Չինաստանի դեսպանը:

«Կարծում եմ՝ այս ոլորտի գիտելիքները Հայաստանի համար շատ կարեւոր են, քանի որ Հայաստանը նույնպես տիեզերք է արձակել արհեստական արբանյակ: Ես շատ ուրախ կլինեմ, որ այսօր հայ երիտասարդները տեսնեն տիեզերագնացների կյանքը տիեզերանավում. կարծում եմ՝ շատ հետաքիր կլինի»,- եզրափակեց Ֆան Յոնգը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, կարեւորելով երեխաների մասնակցությունը նմանատիպ երկխոսությանը, ասաց, որ միջոցառումը հայ-չինական բարեկամության նշան է: «Այս երկխոսությանը մասնակցում է շուրջ 60 երեխա: Ես համոզված եմ, որ իրենց համար սա մասնագիտական կողմնորոշման շատ լավ առիթ կլինի: Սա հնարավորություն կտա երեխաներին զարգացնել իրենց մտահորիզոնը»,- նշեց Մարտիրոսյանը: Առցանց հանդիպմանը տեսակապով միացել էին Շանհայի համագործակցության կազմակերպության 14 երկրի դպրոցականներ:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՑ ԳԻՆԻ ՄԵԴԱԼՆԵՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ

Հայկական վեց գինիներ մեդալներ են ստացել Լոս Անջելեսում կայացած Գինու միջազգային մրցույթում. այս մասին հայտնում է Հայաստանից նրբահամ գինիներ ներկրող Storica Wines-ը: Արծաթե մեդալներ են շնորհվել Voskevaz Karasi Collection Voskehat, Shofer Voskevhat, Shofer Areni եւ Van Ardi Red Blend գինիներին: Ոսկե մեդալ եւ 90 միավոր է ստացել «Ոսկեվազ Արենին», իսկ դասի լավագույն մրցանակն ու 94 միավոր՝ Keush Cuvre Couchanne Brut Sparkling Rose-ը:

Գինիները պատրաստվում են Հայաստանի հնագույն տեղական խաղողի սորտերից, որոնցից երկուսն են ամենահայտնին՝ Ոսկեհատն ու Արենին: Ոսկեհատը բուրավետ սպիտակ խաղող է՝ մրգային նոտաներով, հավասարակշռված թթվայնությամբ եւ թարմացնող հանքային նոտաներով, որը նման է Սեմիլյոնին եւ Շարդոնեին: Արենին նման է Գամեին, որն առաջարկում է վառ մրգային նոտաների խառնուրդ՝ չափավոր թթվայնությամբ:

«Մենք գոհ ենք այս տարվա Լոս Անջելեսի գինիների միջազգային մրցույթում մեր գինիների գրանցած արդյունքներից, հատկապես մեր նոր պորտֆոլիոյի որոշ արտադրանքներից, ինչպիսիք են Keush Sparking Rose եւ Shofer կարմիր ու սպիտակ գինիները: Սա հայաստանյան գինիների որակի եւս մեկ ապացույց է, եւ մենք հուսով ենք, որ Լոս Անջելեսի համայնքը կընդունի այս գինիները եւ այս տարի կգա տոնավաճառ՝ համտեսելու վարդագույնը», - ասել է Storica Wines-ի համահիմնադիր եւ նախագահ Ջակ Արմենը: Keush Cuvre Couchanne Rose-ն Արենի խաղողից պատրաստված փրփրուն գինի է, որը ստացվել է Հայաստանի Խաչիկ գյուղի արտադրողներից: Գինին հնեցվում է առնվազն 22 ամիս, այն ունի կարմիր մրգերի եւ թխվածքաբլիթի նոտաներ՝ կծու թթվայնությամբ ու ուժեղ հանքային նոտաներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի ք., Ջ. Անդրանիկի փողոց, 7, 37 հասցեում գտնվող 76,1 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12200000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 08.05.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 08.06.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

● *Ապրիլի 22-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղկի կունենա «Մալեֆիսենտան» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 14:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ ՀՀ քաղաքացիներին՝ որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու համար:

Հերմինե Օհանյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող այն քաղաքացիները, որոնք ցանկանում են երեխա որդեգրել, դիմում են իրենց բնակության վայրի մարզպետարան (Երեւանի քաղաքապետարան)՝ներկայացնելով՝

1) անձը հաստատող փաստաթուղթ,

2) բնակարանային պայմանների մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,

3) ընտանիքի կազմի մասին տեղեկանք՝ տրված բնակության վայրից,

4) զբաղեցրած պաշտոնի, աշխատավարձի եւ այլ եկամուտների մասին տեղեկանք,

5) անձի պատշաճ վարքագծի մասին անձնական երաշխավորություն՝ տրված կազմակերպության կամ առնվազն երեք անձանց կողմից,

6) բժշկական փաստաթուղթ այն մասին, որ երեխա որդեգրել ցանկացող անձը հիվանդ չէ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 5-ի N 517-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որեւէ մեկով,

7) ամուսնության վկայականի պատճենը (եթե ամուսնացած է),

8) երեխայի՝ ամուսիններից մեկի կողմից որդեգրման դեպքում մյուս ամուսնու գրավոր համաձայնությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ամուսինները դադարեցրել են ամուսնական հարաբերությունները, մեկ տարվանից ավելի համատեղ չեն ապրում, եւ մյուս ամուսնու բնակության վայրն անհայտ է,

9) տեղեկանք՝ որդեգրման պահին մարդու դեմ ուղղված կամ հասարակական կարգի եւ բարոյականության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատվածություն չունենալու մասին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե որդեգրել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացին ունի նախապես ընտրած որդեգրման ենթակա երեխա, որի կապակցությամբ առկա է ծնողների /ծնողի/ գրավոր համաձայնությունը, ապա նա դրա մասին նշում է իր դիմումի մեջ:

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ որ դեպքում կարող է 1-ին կուրսի առաջին կիսամյակում սովորողն օգտվել ուսման վարձի զեղչից:

Դոնարա Ֆեռոյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դ. Ֆեռոյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված եւ ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող 1-ին կուրսի ուսանողներին, ըստ սահմանված չափերի, համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրամադրվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձեւով ուսման վճարի մասնակի փոխհատուցում: Բակալավրի եւ ինտեգրացված կրթական ծրագրով սովորողների համար հաշվի են առնում ընդունելության քննություններից ստացած գումարային գնահատականը, իսկ մագիստրատուրայի ուսանողների համար՝ բակալավրի կրթական ծրագրի միջին որակական գնահատականը /ՄՈԳ/:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դիմորդներն ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությամբ եւ ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են մասնագիտությունները՝ ըստ ուսուցման անվճար եւ վճարովի համակարգերի:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից



Արսեն Հարությունյանը՝ Եվրոպայի եռակի չեմպիոն:

Ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի առաջնության 61 կգ քաշային կարգում Աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիրը 5-2 հաշվով հաղթել է մրցակցին եւ նվաճել ոսկե մեդալ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +10 + 14
Կոտայքի լեռներ	+ 4 + 6 +10 + 13
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 +14 + 16
Գեղարքունիք	+ 3 + 7 +10 + 13
Լոռի	+ 6 + 9 +14 + 18
Տավուշ	+ 8 + 12 +15 + 18
Արագածոտնի լեռներ	+ 4 + 6 + 9 + 12
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 11 +14 + 18

Արարատ	+10 + 13 +19 + 21
Արմավիր	+10 + 13 +18 + 20
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 6 + 8 + 10
Վայոց ձորի նախալեռներ	+10 + 13 +23 + 26
Սյունիքի հովիտներ	+10 + 13 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	+ 5 + 10 +19 + 24
Արցախ	+ 6 + 10 +12 + 15
Երեւան	+10 + 12 +17 + 19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.04.2023**
Հասցեն՝ Գերաբերունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*